գորի»։ Նմանապէս պատմում է, որ երբ Վահան Մամիկոնեան իբրև Հայոց սպարապետ Պարսկաստանից Դուին եկաւ, Յովհան Մանդակունի Հայրապետը դիմաւորեց նորան «պատուական նշանաւ խաչին և սուրբ նշխարօք ճգնազգեաց նահատակին Գրիգորի։» Միևնոյն ժամանակ տեսնում ենք, որ Փարպեցու պատմութեան մէջ Ս. Լուսաւորիչ յիշում է միշտ իբրև պաշտպան և բարեխօս Հայոց համար. նա կոչուում է «առաքելանման հովիւ», «սուրբ նահատակ», «խոստովանող», «ճգնազգեաց նահատակ», «արարող ուղիղ գործոց և ուսուցիչ յստակ և անհեղգ վարդապետութեան.» քրիստոնէութեան լաւ նշան համարուում է Ս. Լուսաւորչի «ամենասուրբ վարդապետութեանն» հետևելը. ուխտապահ ժողովրդի համար սրբերի վարքից բարի օրինակներ բերելու ժամանակ առանձնապէս պատմում էին Ս. Լուսաւորչի «անպատում համբերութիւնը», «չարչարանքները» և «ճգնութիւնը։» Փարպեցին պատմում է նմանապէս թէ որչա՞փ սերտ կապուած էին Հայոց սրտերը Ս. Լուսաւորչի անուան հետ և որչա՞փ վստահ էին նորա բարեխօսութեան վերայ։ Երբ Հրահատ Կամսարականին Պարսից զօրավարը գերի տարաւ, նորա եղբայր Ներսէհը քուն ու դադար չունէր, ասում է Փարպեցին. շարունակ սուգ էր անում և հնարներ էր որոնում իւր եղբօրն ազատելու. շատ փորձեր փորձեց անձամբ փախցնելու նորան